

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅ – Հայաստան Ծրագրի Շահառուների խորհրդի անդամ Լևոն Բարսեղյանի նամակում բարձրացված հարցերի վերաբերյալ

Հարց 1. ՀՀ բյուջեով վերականգնվող ԿՆՃՑ-ի ցանկի վերաբերյալ:

Ամբողջական ցանկ չկա:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը հանդիսանում է պետական լիազոր մարմինը ճանապարհաշինարարության ոլորտի համար և տեղական կառավարման պետական մարմինների ու համայնքապետերի առաջարկությունների, ՀՀ կառավարության և ՀՀ նախագահի համապատասխան որոշումների հիման վրա կազմում է ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորվելիք ճանապարհների ցանկը և որպես բյուջեի հայտ ներկայացնում է ՀՀ կառավարություն: 2006 և 2007 թթ. համար համապատասխան ցանկերը ընդգրկված են Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներում և ՀՀ կառավարության բյուջեի կատարման եռամսյակյան համանասնություններն հաստատող որոշումներում:

2008թ. ՀՀ բյուջեի հայտի նախապատրաստման աշխատանքները համաձայն հաստատված կարգի այժմ ընթանում են:

Հարց 2. «Լինսի» հիմնադրամի և ՀԱՅ – Հայաստան ծրագրերում կրկնվող ճանապարհահատվածների վերաբերյալ:

Շիրակի մարզ.

ա) կապ 74, Անիպենգա - Բագրավան – Սարակապ հատվածի **նորոգումը հանված է Լինսի ծրագրից** դուրս - դրան կուրսի անկման պատճառով:

բ) կապ 75, Իսահակյան – Լուսաղբյուր – Նորաբեր(Շիրակավան) - Գուսանագյուղ –Ս1 հատվածի նորոգումը փոխարինվում է ճանապարհի շարունակությունը կազմող հատվածով 12.82 կմ երկարությամբ (Հ17 կմ 60+960 – կմ 73+780 Բաղադրամաս 6) որը **Լինսի ծրագրից հանված է:**

գ) կապ 70, Նոր Կյանք – Հոռոմ հատվածը 1 կմ երկարությամբ **ընդգրկված չէ Լինսի ծրագրում:**

դ) կապ 69, Մեծ Մանթաշ – Փոքր Մանթաշ – Սարալանջ - Արթիկ - Հոռոմ –Ս1 հատվածը **կհանվի ՀԱՅ –Հայաստան ծրագրից** հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն իրականացվում է Լինսի ծրագրով:

Բացի վերոհիշյալից, ՀԱՅ –Հայաստան ծրագրից կհանվի նաև կապ 79-ը Բայանդուր - Գետք – Դարիքջանյան - Ագատան – Ս1, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն իրականացվում է Լինսի ծրագրով:

Ընդհանուր առմամբ Շիրակի մարզից կհանվեն ոչ թե 46.5 կմ այլ միայն 13.6 կմ ճանապարհահատվածներ հաշվի առնելով Լինսի ծրագրի իրականացման փոփոխված տարբերակը:

Լոռու մարզ:

ա) կապ 59, Կողես –Յաղդան - Ագարակ – Լոռի Բերդ - Մ3 հատվածի նորոգումը հանված է Լինսի ծրագրից դուլար - դրամ կուրսի անկման պատճառով: Այդ ճանապարհի մի մասի վերականգնումը ընդգրկված է 2007թ. ՀՀ պետական բյուջեում:

Արագածոտնի մարզ:

ա) կապ 1, Գեղադիր – Նորաշեն 2 կմ երկարությամբ հատվածը կհանվի ՀՄՀ –Հայաստան ծրագրից հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն իրականացվում է Լինսի ծրագրով:

բ) կապ 9, Թլիկ - Գետափ - Արագած - Արենի – Մ9 հատվածի նորոգումը հանված է Լինսի ծրագրից դուլար - դրամ կուրսի անկման պատճառով:

Ընդհանուր առմամբ Արագածոտնի մարզից կհանվեն ոչ թե 28 կմ այլ միայն 2 կմ ճանապարհահատված հաշվի առնելով Լինսի ծրագրի իրականացման փոփոխված տարբերակը:

Արմավիրի մարզ:

ա) Քարակերտ - Դալարիկ հատվածի նորոգումը հանված է Լինսի ծրագրից դուլար - դրամ կուրսի անկման պատճառով:

Այդ կապից կհանվի Լեռնագոգ - Դալարիկ 4 կմ հատվածը, որն ընդգրկված է 2007թ. ՀՀ պետական բյուջեում:

Ընդհանուր առմամբ Արմավիրի մարզից կհանվի միայն 4 կմ ճանապարհահատված հաշվի առնելով ՀՀ 2007թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագիրը:

Այսպիսով, ներկայացված 4 մարզերից Լինսի հիմնադրամի և ՀՀ պետ բյուջեի իրականացման հետ կապված ընդհանուր առմամբ ՀՄՀ – Հայաստան ծրագրից կհանվի 27.6 կմ ոչ թե 92.5 կմ ինչպես նշված է պրն Բարսեղյանի նամակում:

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ, ՀՀ դրամ - ԱՄՆ դուլար փոխարժեքի անկումը արդի դրությամբ հանգեցրել է մոտ 14 մլն ԱՄՆ դուլար գումարի անբավարարության: Ուստի անգամ այդ հատվածների ծրագրից հեռացնելու պարագայում, փոխարժեքի ներկա չափի պահպանման դեպքում խնդիր կառաջանա ևս կրճատել ծրագիրը:

Չարք 3. Չառիճ տանող ճանապարհի մասին:

Ճահառուների խորհրդի անդամ պարոն Լ. Ներսիսյանին ուղղված նամակում Չառիճի գյուղապետը նշում է, որ « Մայրուղուց դեպի Չառիճ տանող 1.4 կմ երկարությամբ ճանապարհը գտնվում է բավականին լավ վիճակում (հարթեցված է, կան ջրահեռացման խրամատներ, գյուղամեջի թեք ճանապարհը սալապատված է), սակայն այն հողածածկ է, ...»: ԳՂ բազում բնակավայրերի միջպետական մայրուղիներին կապող ճանապարհները բացի այն հանգամանքից, որ հողածածկ են, նաև անանցանելի են և ապահովված չեն ջրահեռացմամբ: ԳՂՂ – Գայաստան Ծրագրի կազմման հիմքում դրված չի եղել որևէ ճանապարհի ծածկի տեսակի դեպի ավելի բարձր կարգ փոխադրություն:

Չարք 4 Չամայքների անվանումների տեխնիկական սխալների վերաբերյալ

Դիտողություններն ընդունելի են:

Չայկավան համայնքի կապի ապահովման խնդիրը կքննարկվի նախագծային կազմակերպության հետ:

Չարք 5. Ճինարարության 1 կմ միջին արժեքների վերաբերյալ:

Ծրագրում ներկայացված արժեքները մոտավոր են և դրանք յուրաքանչյուր ճանապարհահատվածի նախագծման աշխատանքների ավարտից հետո միայն կճշգրտվեն: Իրենց ճշգրտումները կկատարեն նաև մրցույթները , քանզի մրցույթի ավարտից հետո միայն պարզ կլինի Ճինարարության իրական արժեքը:

Սակայն, հարկ է նշել որ ընդհանուր գնի բաժանումը ընդհանուր երկարության վրա եղանակի կիրառումը ճիշտ է միայն այն դեպքում երբ կատարվում են միատեսակ աշխատանքներ բոլոր հատվածներում: Այն դեպքում երբ յուրաքանչյուր մարզի տարածքում կատարվում են բազմատեսակ վերականգնողական աշխատանքներ, այս եղանակի կիրառումը հանգեցնում է ոչ ճիշտ արդյունքների: Մասնավորապես Արարատի և Արմավիրի մարզերում բոլոր ճանապարհները ներկա պահին ասֆալտապատ ճանապարհներ են և նախատեսվում է դրանց վերականգնումը: Այլ մարզերում կոպճային ճանապարհների, մակերեսային մշակման և այն աշխատանքների տոկոսային հարաբերությունները տարբեր են:

Ծրագրի մշակման փուլում կիրառվել են միասնական միավոր արժեքներ տարբեր վերականգնողական աշխատանքների համար անկախ մարզային պատկանելությունից: